ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԵԽԽՎ-ՈՒՄ

(Ներկայացնում է “Արմեդիա” ՏՎԳ-ն)

Սույն ձեռնարկը ներկայացնում է դարաբաղյան հակամարտությանը եւ նրա կարգավորմանն ուղղակի եւ անուղղակի առնչվող ԵԽԽՎ ընդունած փաստաթղթերը:

Հեղինակ՝ Աննա Մկրտչյան
Թարգմանիչ՝ Նունե Մելքոնյան

© “Արմեդիա” ՏՎԳ, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- էջ 4

1. ՀԱՏՈՒԿ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ “ՀԱՏՈՒԿ ՀՅՈՒՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ”------- էջ 5
2. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ Է----------էջ 13
3. 1416-Ը “ԶԱՐԳԱՆՈՒՄ Է”----------էջ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը եվրոպական առաջին խորհրդարանական ֆորումն է եւ, թերեւս, այսօր նման ձեւաչափով գործող կառույցների առավել հեղինակավորը: Այն Նախարարների կոմիտեի հետ միասին Եվրոպայի խորհրդի գլխավոր երկու մարմիններից մեկն է: ԵԽԽՎ ընդունած փաստաթղթերը գործողությունների յուրովի ուղեցույց են Նախարարների կոմիտեի, անդամ երկրների կառավարությունների, խորհրդարանների, քաղաքական կուսակցությունների համար: 1990-ականների սկզբին Արեւելյան Եվրոպայում ընթացող քաղաքական, հասարակական տրանսֆորմացիոն գործընթացները նոր խնդիրներ առաջադրեցին Եվրոպայի խորհրդի համար՝ որպես աշխարհամասի իրավապաշտպան կարեւոր կառույցներից մեկի: 1989 թվականից Խորհրդաժողովն աջակցում է ողջ Եվրոպայում ճգնաճամային իրավիճակների հաղթահարմանը: Այդ նպատակով ԵԽԽՎ շրջանակում պարբերաբար կազմակերպվում են քաղաքական քննարկումներ՝ կոնֆլիկտային տարածաշրջաններում իրականացված այցելությունների, առաքելությունների աշխատանքի հիման վրա:

Բացառություն չէր նաեւ ղարաբաղյան հակամարտությունը: Թեեւ Հայաստանը ԵԽ-ին անդամակցության դիմում է ներկայացրել 1996թ.-ին եւ կառույցի լիիրավ անդամ դարձել միայն 2001թ.-ին, ղարաբաղյան հակամարտության շուրջ ԵԽԽՎ առաջին փաստաթղթերն ընդունվել են դեռեւս 1992թ.: Հակամարտության կարգավորման ողջ ընթացքում այն շարունակում է մնալ Խորհրդարանական վեհաժողովի ուշադրության կենտրոնում իր բոլոր կողմերով՝ մարդասիրական, քաղաքական:

Սույն ձեռնարկը ներկայացնում է ղարաբաղյան հակամարտության եւ նրա կարգավորման շուրջ ԵԽԽՎ ընդունած փաստաթղթերը, նաեւ նրանք, որոնք խնդրին անդրադառնում են ոչ ուղղակիորեն:

Սակայն ղարաբաղյան խնդրի եւ նրա կարգավորման ուղիների շուրջ Եվրախորհրդի մոտեցումներն ու դիրքորոշման փոփոխությունները չեն կարող ամբողջական լինել միայն ԵԽԽՎ կտրվածքով դիտարկման դեպքում: Ուստի “Արմեդիա” ՏՎԳ-ն առաջիկայում կհամալրի այս շարքը՝ ներկայացնելով նաեւ ԵԽ Նախարարների կոմիտեի եւ մյուս մարմինների կողմից ԼՂ շուրջ ընդունված փաստաթղթերի ամբողջությունը:

ՀԱՏՈՒԿ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ “ՀԱՏՈՒԿ ՀՅՈՒՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ”

1996թ. հունվարի 26-ին Հայաստանի Ազգային ժողովը ստացավ Հատուկ հյուրի կարգավիճակ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում: Մինչեւ Հայաստանի եւ Ադրբեջանի՝ ԵԽ նաղամակցությունը ղարաբաղյան հակամարտության շուրջ ԵԽԽՎ փաստաթղթերում նկատվում է որոշակի հավասարակշիռ մոտեցում հակամարտությունում ներքաշված կողմերի նկատմամբ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովն առաջին անգամ անդրադարձել է դեռեւս 1992թ.: ԵԽԽՎ շրջանակում ընդունված առաջին փաստաթղթերում մասնավորապես շեշտադրվում է խնդրի մարդասիրական կողմը:

Այսպիսով՝ "ԵԱՀԽ երրորդ գագաթաժողովի (Հելսինկի, 1992թ. հուլիսի 9-11) նախօրեին ԵԱՀԽ աշխատանքի մասին 1184 հանձնարարականը" մասնավորապես նշում է, որ Խորհուրդը "պետք է ուղիներ գտնի մայրցամաքում առկա հակամարտությունների դեմ արդյունավետ կերպով պայքարելու համար:" Մայրցամաքի ամենաթեժ հակամարտությունների շարքում նշվում են նախկին Հարավսլավիան, որտեղ, ըստ փաստաթղթի, ականատես ենք եղել Բոսնիա-Հերցեգովինայի ողբերգական իրադարձություններին, եւ Լեռնային Ղարաբաղը: "Այդ նպատակին (հակամարտության դադարեցմանը) հասնելու համար կարեւոր է, որպեսզի ԵԱՀԽ ինստիտուցիոնալ կառուցվածքը համապատասխանեցվի հակամարտությունների կանխման եւ խաղաղապահ գործունեության բնագավառում կառույցի աճող դերին",-նշված է հանձնարարականում:

Այսպիսով՝ հակամարտությունների կարգավորման հարցում այս փաստաթղթով ԵԽ-ն լիովին ապավինում է ԵԱՀԽ-ին եւ վերջինիս գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կառույցի բարեփոխում առաջարկում:

1993-ին ԵԽԽՎ-ն ղարաբաղյան հակամարտությանն անդրադառնում է Նախկին խորհրդային երկրների միջեւ բնակչության տեղաշարժերի մասին 996 բանաձեւի շրջանակում: Փաստաթուղթը մասնավորապես նշում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո "Մոլդովայում, Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Օսիայում եւ Ինգուշեթիայում, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնությունում ընդհանրապես եւ Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում շուրջ մեկ միլիոն էթնիկ ռուսներ եւ այլ ազգի ներկայացուցիչներ են տեղահանվել: Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում եւ Տաջիկստանում վերջին եւ դեռեւս շարունակվող բռնությունների պատճառով տասնյակ հազարավոր ընտանիքներ անհապաղ օգնության եւ շարունակական օժանդակության կարիք ունեն՝ ձմռանը դիմակայելու համար":

Ուստի Վեհաժողովը, հաշվի առնելով այս ամենը, ԽՍՀՄ նախկին պետություններին կոչ է անում հրատապ կարգավորման խնդիր համարել՝

i. այդ պետությունների ներսում եւ միմյանց միջեւ անընդհատ աճող էթնիկ բախումները եւ լիովին օգտագործել հակասությունների խաղաղ

կարգավորման ու հակամարտությունների կանխման ԵԱՀԽ մեխանիզմները,
iv. անհապաղ վերջ դնել Հայաստանի շրջափակմանը,
v.ճանաչել Ստալինի օրոք տեղահանված անձանց՝ իրենց ծագման երկրներ վերադառնալու իրավունքը:

Հատկանշական է, որ Վեհաժողովը ճանաչում է, ոչ միայն վերջին հակամարտության հետեւանքով տեղահանված անձանց, այլեւ տասնամյակներ առաջ իրականացված քաղաքականության հետեւանքով տեղահանվածների վերադարձի իրավունքը:

Վեհաժողովն անմիջականորեն ղարաբաղյան խնդրին առաջին անգամ անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ 1251 (1994)1 հանձնարարականով (1994թ. նոյեմբերի10) եւ նույն օրն ընդունված համապատասխան բանաձեւով: Առաջին փաստաթուղթը մասնավորապես նշում է, որ ԵԽ՝ Եվրոպական ոչ-անդամ երկրների հետ հարաբերությունների կոմիտեն 1992թ.-ից ի վեր մի շարք լսումներ է կազմակերպել, որոնց մասնակցել են Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների, "Լեռնային Ղարաբաղի ղեկավարության" եւ "Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական շահագրգիռ կողմի" պատվիրակությունները:

Փաստաթղթում ԵԽԽՎ-ն գոհունակություն է հայտնում հրադադարի պահպանման առիթով, հույս հայտնում, որ դրան կհետեւի "շահագրգիռ բոլոր կողմերի միջեւ հնարավորինս արագ խաղաղության համաձայնագրի ստորագրումը": Ողջունվում են այդ ուղղությամբ ԵԱՀԽ Մինսկի խմբի, ՄԱԿ ԱԽ-ի, ՌԴ-ի կառավարության եւ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի ջանքերը:

Միաժամանակ Վեհաժողովը Նախարարների կոմիտեին առաջարկում է՝

i. ԵԽ անդամ երկրների կառավարություններին կոչ անել ԵԱՀԽ Մինսկի խմբին ապահովել անհրաժեշտ միջոցներով, որպեսզի այն կարողանա իրականացնել իր նպատակները, մասնավորապես հակամարտության գոտում միջազգային դիտորդներ տեղակայել,
ii. վերսկսել Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների միջեւ քաղաքական երկխոսությունը,
iii. համապատասխան պայմանների առկայության դեպքում հնարավորինս արագ բացել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ համագործակցության ծրագրերը եւ նշված կողմերի ցանկության դեպքում նրանց փորձագետներ տրամադրել, ովքեր կօգնեն սահմանել Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը:

Ուշագրավ են հատկապես փաստաթղթի նախապատրաստմանը նաեւ ղարաբաղյան կողմի անմիջական մասնակցությունը եւ այդ փաստի արձանագրումը հանձնարարականում, ինչպես նաեւ ԼՂ քաղաքական կարգավիճակի քննարկման անհրաժեշտության սահմանումը:

Նույն օրն ընդունված Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ 1047 (1994)

բանաձեւով (1994թ. նոյեմբերի10) "Խորհրդաժողովը հայտարարում է իր պատրաստակամությունը՝ խթանելու խաղաղության պայմանագրի կնքումն իր հնարավորությունների առավելագույն սահմաններում՝ մասնավորապես խրախուսելով շահագրգիռ կողմերի խորհրդարանների միջեւ երկխոսությունը": Վեհաժողովը պատերազմող կողմերին կոչ է անում անհապաղ կազմակերպել փախստականների վերադարձն իրենց տներ, հարգել փոքրամասնությունների իրավունքները այն հիմքով, ինչպես դրանք պաշտպանված են 1201 Հանձնարարականում: Ադրբեջանին ու Թուրքիային անհապաղ կոչ է անում անմիջապես դադարեցնել Հայաստանի հետ իրենց հաղորդակցության ուղիների շրջափակումը:

Հաջորդ բանաձեւերում եւս ԵԽԽՎ-ն ղարաբաղյան խնդրին անդրադառնում է փախստականների եւ ընդհանրապես մարդասիրական իրավունքների տեսանկյունից: Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց մասին 1263 (1995)1 հանձնարարականով (1995թ. մարտի 15) ԵԽԽՎ-ն "Լեռնային Ղարաբաղի դաժան հակամարտության զոհերին եւ տեղահանված անձանց տրամադրվող միջազգային օգնությունը համարում է անբավարար": Ուստի ԵԽ անդամ երկրներին կոչ է արվում ՄԱԿ գործակալությունների, Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի եւ հասարակական կազմակերպությունների միջոցով ապահովել միջազգային հանրության երկարամյա ներկայությունը Կովկասում: Կոչ է արվում "Ղարաբաղի շրջակա տարածքների" ականազերծման համար ապահովել անհրաժեշտ փորձաքննություն եւ մարդկային ռեսուրսներ տրամադրել, քաղաքական երկխոսություն սկսել Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի իշխանությունների հետ՝ վերահաստատելով մարդու իրավունքների, խորհրդարանական ժողովրդավարության հաստատման, անհրաժեշտության դեպքում փոքրամասնությունների իրավունքների ու մշակութային ինքնության պաշտպանության բնագավառներում ԵԽ աջակցությունը:

Նույն օրն ընդունված Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց վիճակի մասին 1059 (1995) բանաձեւում (1995թ. մարտի 15) "Վեհաժողովը ցավով նշում է, որ 1988թ. սկիզբ առած Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը անասելի տառապանքների պատճառ է դարձել, ինչի հետեւանքով զոհվել են հազարավոր մարդիկ, վիրավորվել տասնյակ հազարավորները, ավելի քան մեկ միլիոնը տեղահանվել կամ փախստական են դարձել Հայաստանից եւ Ադրբեջանից:"

Հատկապես ուշագրավ է բանաձեւի երկրորդ կետը, որտեղ նշվում է՝

> **2.** Այս վերջին թիվը (մեկ միլիոն տեղահանվածներ) ներառում է հարյուրհազարավոր անձանց, ովքեր մինչեւ 1991թ.-ը ստիպված են եղել լքել իրենց տները խորհրդային իշխանությունների իրականացրած դաժանությունների կամ սահմանած կարգերի պատճառով:

Հայկական կողմի համար այս կետը թերեւս առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ պարզաբանում է մտցնում ԵԽԽՎ փաստաթղթերում "փախստականների վերադարձի իրավունք" ձեւակերպման մեջ:

Միաժամանակ բանաձեւով Վեհաժողովը պատերազմող կողմերին կոչ է անում հնարավորինս արագ ապահովել այն փախստականների վերադարձը, ովքեր ցանկանում են վարվել այդպես՝ փոխհատուցելով նրանց, ովքեր ցանկանում են բնակություն հաստատել այլ վայրում, անհապաղ դադարեցնել միմյանց միջեւ շրջափակումը բոլոր՝ տրանսպորտային, հաղորդակցության ոլորտներում՝ այդ թվում նաեւ Ռուսաստանի եւ Թուրքիայի կողմից սահմանված:

Վեհաժողովը Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի կառավարություններից պահանջում է առողջապահական, կրթական, վերականգնման եւ զարգացման ոլորտներում լիակատար համագործակցություն ապահովել ՄԱԿ-ի գործակալությունների եւ ոչ-կառավարական կազմակերպությունների հետ: Միջազգային հանրությանը կոչ է արվում ակտիվացնել Կովկասում խաղաղություն հաստատելու եւ հումանիտար դրությունը բարելավելու ուղղությամբ ջանքերը:

Եվրոպայի Խորհրդին Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության նախաշեմին ղարաբաղյան հակամարտության առնչությամբ ամրագրվում է "Որպեսզի ե՛ւ գայլերը կուշտ լինեն, ե՛ւ ոչխարները ողջ" ձեռագիրը: Անդրկովկասում հակամարտությունների մասին 1119 (1997) բանաձեւում (1997թ. ապրիլի 22) առաջին անգամ շրջանառվում է "օկուպացված տարածք" ձեւակերպումը (մինչդեռ Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց մասին 1263 (1995)1 հանձնարարականում (1995թ. մարտի 15) խոսվում է "Ղարաբաղի շրջակա տարածքների մասին")

ԵԽԽՎ թիվ 1119 (1997) բանաձեւում մասնավորապես նշվում է, որ հարավկովկասյան երեք երկրները, որոնք ԵԽ-ում հատուկ հյուրի կարգավիճակ ունեն, դիմել են լիիրավ անդամակցության համար: Լեռնային Ղարաբաղի եւ Աբխազիայի հակամարտությունների կարգավորման հարցում դրսեւորված իրական քաղաքական կամքը կօգնի արագացնել անդամակցության ընթացակարգը:

Փաստաթղթի 5-րդ կետում նշվում է. "Թեեւ այս երկու հակամարտությունները (Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ) էությամբ տարբեր են, Վեհաժողովն ընդգծում է, որ դրանց քաղաքական կարգավորումը պետք է բանակցվի ներգրավված բոլոր կողմերի միջեւ՝ հետեւյալ սկզբունքների հիման վրա, որոնք բխում են 1975թ. Հելսինկիի Եզրափակիչ ակտից եւ 1990թ. Փարիզյան խարտիայից՝

i. սահմանների անխախտելիություն,

ii. նշված տարածքներում բնակվող անձանց անվտանգության երաշխավորում, մասնավորապես՝ բազմազգ խաղաղապահ ուժերի միջոցով,

iii. Աբխազիայի եւ Լեռնային Ղարաբաղի լայն ինքնավարության հարցը պետք է բանակցվի շահագրգիռ բոլոր կողմերի միջեւ"

Բանաձեւը Լեռնային Ղարաբաղի առնչությամբ հակամարտության բոլոր կողմերին կոչ է անում ակտիվացնել ուղղակի բանակցությունները՝ քաղաքական կարգավորման հասնելու նպատակով, որը կերաշխավորի "օկուպացված տարածքների վերադարձը, փախստականների եւ տեղահանված անձանց՝ վերադառնալու իրավունքը, Լեռնային Ղարաբաղի բավարարող այլընտրանքային կարգավիճակ, ինչպես եւ նրա անվտանգությունը:

11. Ի վերջո, Վեհաժողովը հույս է հայտնում, որ երկարատեւ հեռանկարում հարավկովկասյան երեք երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը կդիտարկեն Հարավկովկասյան պետությունների համայնք ստեղծելու եւ միացյալ խորհրդարանական վեհաժողով ձեւավորելու հարցը":

Չնայած Անդրկովկասը միասնական ամբողջություն տեսնելու՝ Վեհաժողովի ցանկությանը՝ հետաքրքիր է, որ փաստաթուղթն ընդգծում է Աբխազիայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների՝ բնույթով տարբեր լինելը:

Ընդգծենք, որ այս անգամ եւս բանաձեւը կարեւորում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին շահագրգիռ բոլոր կողմերի ուղղակի մասնակցության անհրաժեշտությունը: Սակայն Ղարաբաղի կարգավիճակը, որին եւ միտված պետք է լինեին ուղղակի բանակցությունները, փաստաթղթում նշվում է որպես լայն ինքնավարություն: Ինչը, թերեւս, պայմանավորված է ղարաբաղյան կարգավորման շուրջ տվյալ ժամանակահատվածի (1997թ.) համար ակտուալ բանակցային առաջարկների հետ:

ԵԽ-ին Հայաստանի անդամակցության դիմումի վերաբերյալ Կարծիք թիվ 221 (2000)-ում (2000թ. հունիսի 28) ԵԽԽՎ-ն կրկին ընդգծում է հարավկովկասյան հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու անհրաժեշտությունը: Փաստաթղթում մասնավորապես նշվում է՝

"**7.** Վեհաժողովին խնդրելով կարծիք տրամադրել անդամակցության դիմումի վերաբերյալ՝ Նախարարների կոմիտեն վերստին նշեց, որ Եվրոպայի խորհրդի եւ Կովկասի երկրների միջեւ առավել սերտ փոխհարաբերությունները պահանջում են ոչ միայն էական ժողովրդավարական բարեփոխումներ, այլեւ հակամարտությունները խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու պատրաստակամություն,

8. խորհրդարանական վեհաժողովը հավատում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցությունը կարող է նպաստել վստահության միջավայրին, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման համար:

9. Վեհաժողովը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը ամենահարմար կառույցն է հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար,

10. Վեհաժողովը նկատի է առնում Հայաստանի Նախագահի նամակը, որում վերջինս պարտավորվում է հարգել հրադադարի համաձայնությունը նախքան

հակամարտության վերջնական հանգուցալուծումը, եւ շարունակել խաղաղ բանակցության ճանապարհով հակամարտության կարգավորումը բոլոր ներգրավված կողմերի համար ընդունելի փոխզիջումներով,

11. երկու երկրների նախագահների միջեւ հանդիպումների հաճախականությունն ավելացել է. Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի խորհրդարանների խոսնակները որոշել են տարածաշրջանային խորհրդարանական համագործակցություն ծավալել, որը կներառի մասնավորապես խորհրդարանների խոսնակների հանդիպումներ եւ խորհրդարանական սեմինարների անցկացում վերոնշյալ երեք երկրների մայրաքաղաքներում եւ Ստրասբուրգում: Տարածաշրջանում առաջին հանդիպումը, որն անցկացվեց Թբիլիսիում 1999թ. սեպտեմբերին, հնարավոր դարձրեց Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունների միջեւ ստեղծել լարվածության թուլացման եւ վստահության մթնոլորտ:

12. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին շարունակել երկխոսությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ տարածաշրջանային համագործակցության խթանման նպատակով:

ԵԽ անդամակցության համար Հայաստանը Լեռնային Ղարաբաղի մասով պարտավորվում է՝

ա. հետամուտ լինել այս հակամարտության միայն խաղաղ ճանապարհով կարգավորմանը.

բ. օգտագործել Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ ունեցած զգալի ներգործությունը՝ հակամարտության կարգավորմանը նպաստելու նպատակով.

գ. միջազգային եւ ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով եւ միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վճռականորեն մերժելով հարեւանների նկատմամբ ուժի սպառնալիքի որեւէ դրսեւորում":

Բառացիորեն նույն պարտավորություններն է ստանձնում նաեւ Ադրբեջանը ԵԽ-ին անդամակցելու նպատակով: Կարծիք թիվ 222 (2000) ԵԽ-ին Անդամակցության Ադրբեջանին դիմումի վերաբերյալ:

"**8.** Վեհաժողովին խնդրելով կարծիք տրամադրել անդամակցության դիմումի վերաբերյալ՝ Նախարարների կոմիտեն վերստին նշեց, որ Եվրոպայի խորհրդի եւ Կովկասի երկրների միջեւ առավել սերտ փոխհարաբերությունները պահանջում են ոչ միայն էական ժողովրդավարական բարեփոխումներ, այլեւ հակամարտությունները խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու պատրաստակամություն:

9. Խորհրդարանական վեհաժողովը հավատում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցությունը կարող է նպաստել վստահության միջավայրին, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման համար:

10. Վեհաժողովը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն ամենահարմար կառույցն է հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար:

11. Վեհաժողովը նկատի է առնում Ադրբեջանի Նախագահի նամակը, որում վերջինս վերահաստատում է իր երկրի պարտավորությունը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով, եւ ընդգծում է, որ Ադրբեջանի ներգրավումը Եվրոպայի Խորհրդին զգալի ներդրում կլինի բանակցային գործընթացին եւ տարածաշրջանի կայունությանը:

12. Երկու երկրների նախագահների միջեւ հանդիպումների հաճախականությունն ավելացել է: Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարանների խոսնակները որոշել են տարածաշրջանային խորհրդարանական համագործակցություն ծավալել, որը կներառի մասնավորապես խորհրդարանների խոսնակների հանդիպումներ եւ խորհրդարանական սեմինարների անցկացում վերոնշյալ երեք երկրների մայրաքաղաքներում եւ Ստրասբուրգում: Տարածաշրջանում առաջին հանդիպումը, որն անցկացվեց Թբիլիսիում 1999թ. սեպտեմբերին, հնարավոր դարձրեց Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունների միջեւ ստեղծել լարվածության թուլացման եւ վստահության մթնոլորտ:

13. Վեհաժողովը կոչ է անում Ադրբեջանի եւ Հայաստանի իշխանություններին շարունակել երկխոսությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ տարածաշրջանային համագործակցության խթանման նպատակով:

14. Խորհրդարանական վեհաժողովը նկատի է առնում Ադրբեջանի նախագահի, Խորհրդարանի խոսնակի, Վարչապետի եւ խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախագահների նամակները եւ նշում է, որ Ադրբեջանը ստանձնում է հետեւյալ պարտավորությունները:

ii. Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը՝

ա. հետամուտ լինել այս հակամարտության միայն խաղաղ ճանապարհով կարգավորմանը.

բ. միջազգային եւ ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով եւ միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վճռականորեն

մերժելով հարեւանների նկատմամբ ուժի սպառնալիքի որեւէ դրսեւորում":

Վերջին երկու փաստաթղթերն ունեն միայն մեկ տարբերություն, ԵԽԽՎ-ն Հայաստանին պարտավորեցնում է "օգտագործել Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ ունեցած զգալի ներգործությունը հակամարտության կարգավորմանը նպաստելու նպատակով", սակայն Ադրբեջանի դիմումի շուրջ կարծիքում ոչինչ չի ասվում այսպես կոչված Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական կողմի վրա Բաքվի ներգործության մասին, ինչը խոսում է թերեւս այն մասին, որ Ադրբեջանի կողմից շրջանառության մեջ մտցված վերջին ձեւակերպումը չի ընկալվում միջազգային հանրության կողմից: Մինչդեռ նախորդ բանաձեւերում ընդգծելով կարգավորման բանակցություններում շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցության անհրաժեշտությունը՝ ԵԽԽՎ-ն վերջին ձեւակերպման ներքո նկատի ունի Հայաստանից եւ Ադրբեջանից բացի նաեւ Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ Է

Մարդու իրավունքների պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի գործունեության անկյունաքարերից է: Ուստի ցանկացած հակամարտություն, որն ինքնին սպառնալիք է մարդու՝ ապրելու բնական իրավունքի համար, դեմ է կառույցի փիլիսոփայությանը: Այսպես էլ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման պահանջը դարձավ ԵԽ-ին Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության նախապայման: Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող մասով ԵԽ բոլոր փաստաթղթերում միջազգային իրավունքի բոլոր սկզբունքներից առավել կարեւորվում է ուժ եւ ուժի սպառնալիք չկիրառելու պահանջը:

Բանաձեւ 1304 /2002/
Հայաստանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների մասին

24. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ:

I. Վեհաժողովը ճանաչում եւ ողջունում է այն անհերքելի ջանքերը, որ Հայաստանը ձեռնարկել է Ադրբեջանի հետ կանոնավոր բարձր մակարդակի կապեր պահպանելու համար եւ այն դրական ազդեցությունը, որ դրանք ունեցել են Լեռնային Ղարաբաղի հայերի վրա՝ նպատակ ունենալով հասնելու համապատասխան խաղաղ կարգավորման:

II. Վեհաժողովը մեծապես հուսով է, որ ընթացքի մեջ գտնվող բանակցային գործընթացը շուտով կհանգեցնի Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընդունելի լուծման՝ համահունչ մնալով Եվրոպայի խորհրդի եւ միջազգային օրենքի սկզբունքներին:

III. Այն հիշեցնում է, որ կարող է նախատեսել մոնիթորինգի գործընթացի փակում միայն այն դեպքում, եթե շահագրգիռ պետությունը կատարի իր բոլոր հիմնական պարտավորությունները, որոնք Ադրբեջանի ու Հայաստանի դեպքում ներառում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը, ներառյալ գրավյալ տարածքները եւ Մինսկի խմբի քննմանը ենթական այլ հիմնահարցեր, ինչը շարունակվում է արդեն ավելի քան տասնչորս տարի:

25. Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները եւ այն պարտավորություններն ու պարտականությունները, որ դեռ պետք է կատարվեն, Վեհաժողովը, ընդունելով, որ Հայաստանն էական առաջընթաց է ապրել իր անկախության ընդունումից ի վեր, որոշում է շարունակել մոնիթորինգի գործընթացը՝ սերտորեն համագործակցելով հայկական պատվիրակության հետ:

Բանաձեւ 1305 /2002/

Ադրբեջանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների մասին

9. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առնչությամբ:

I. Վեհաժողովը ճանաչում եւ ողջունում է այն անուրանալի ջանքերը, որ Ադրբեջանը ձեռնարկել է Հայաստանի հետ կանոնավոր, բարձր մակարդակի կապեր պահպանելու համար՝ նպատակ ունենալով հասնելու համապատասխան խաղաղ կարգավորման:

II. Ինչեւէ, Վեհաժողովը մտահոգված է հակամարտության վերաբերյալ փակուղի մտած բանակցությունների պատճառով ադրբեջանական հասարակությունում ավելի ու ավելի հաճախ արտահայտվող հիասթափությամբ:

III. Վեհաժողովը մեծապես հուսով է, որ շարունակվող բանակցային գործընթացը՝ ներառյալ Նախիջեւանում երկու երկրների նախագահների վերջերս կայացած հանդիպումը, շուտով կհանգեցնի տարածքային հակամարտության խաղաղ կարգավորման՝ Եվրոպայի խորհրդի ու միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան:

IV. Այն հիշեցնում է, որ կարող է նախատեսել մոնիթորինգի գործընթացի փակում միայն այն դեպքում, եթե բոլոր հիմնական պարտավորությունները կատարվեն, որոնք Ադրբեջանի ու Հայաստանի դեպքում ներառում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը, ներառյալ գրավյալ տարածքները, ինչին (կարգավորմանը) սպասում են արդեն ավելի քան ութ տարի:

Այս երկու փաստաթղթերի համեմատությունն ընդգծում է, որ կառույցը գոնե հրապարակայնորեն շարունակում է հավատարիմ մնալ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկին՝ փորձելով այն պարտադիր դարձնել իր անդամների համար: Սակայն Ադրբեջանի ստանձնած պարտավորությունների մասին բանաձեւում առաջին անգամ կասկածի տակ է դրվում Մինսկի խմբի ձեւաչափով իրականացվող բանակցային գործընթացի արդյունավետությունը՝ հղում կատարելով ադրբեջանական հասարակական շրջանակներում դժգոհության վրա:

Հետագա փաստաթղթերում քննադատության են արժանանում ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը ղարաբաղյան հակամարտության շուրջ բանակցային գործընթացում առաջընթացի բացակայության պատճառով:

Բանաձեւ 1405 /2004/

1361 (2004) եւ 1374 (2004) Բանաձեւերի համաձայն՝ Հայաստանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների կատարման մասին

4. Հակառակ Հայաստանի հայտնած ցանկության՝ Ադրբեջանի հետ հասնելու Լեռնային Ղարաբաղի իրավիճակի խաղաղ լուծմանը՝ Վեհաժողովը ստիպված է եզրակացնել, որ անցած տարվա ընթացքում ոչ մի էական առաջընթաց ձեռք չի բերվել՝ ո՛չ երկու երկրների միջեւ ուղղակի բանակցությունների մակարդակով, որոնք դեռ շարունակվում են, ո՛չ էլ Մինսկի խմբի մակարդակով:

Բանաձեւ 1398 (2004) Ադրբեջանում ժողովրդավարական ինստիտուտների գործառնության մասին 1358 (2004) Բանաձեւի կատարման վերաբերյալ

3. Հակառակ այն փաստին, որ Ադրբեջանը հայտարարել է, թե ինքը կողմ է Լեռնային Ղարաբաղի եւ գրավյալ տարածքների շուրջ ծավալված հակամարտության խաղաղ կարգավորմանը, ինչը Եվրոպայի խորհրդի առջեւ Ադրբեջանի ու Հայաստանի պարտավորություններից մեկն է՝ Վեհաժողովը չի կարող չնկատել, որ ոչ մի էական առաջընթաց չի կատարվել վերջին մեկ տարվա ընթացքում՝ ո՛չ երկու երկրների միջեւ ուղղակի բանակցությունների մակարդակով, որոնք դեռ շարունակվում են, ո՛չ էլ Մինսկի խմբի մակարդակով: Վեհաժողովը շարունակում է պնդել, որ Ադրբեջանը եւ Հայաստանը շարունակեն փնտրել հակամարտության միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան շուտափույթ լուծում:

Եթե մինչեւ այժմ Հայաստանի, Ադրբեջանի, ինչպես նաեւ անմիջականորեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ընդունված ԵԽԽՎ փաստաթղթերում որոշակի հավասարակշռություն էր նկատվում հակամարտության կողմերի նկատմամբ վերաբերմունքում, իսկ ԼՂ հակամարտությանն անմիջականորեն վերաբերող առաջին փաստաթղթերում մասնակիորեն արտացոլվում էր բուն ղարաբաղյան տեսակետը, ապա ԵԽԽՎ հետեւյալ (1416) բանաձեւն ու զուգահեռաբար ընդունված հանձնարարականն ամբողջովին դուրս են խնդրին առնչվող հենց ԵԽԽՎ փաստաթղթային ողջ տրամաբանությանը:

Բանաձեւ 1416 (2005) ԵԱՀԿ մինսկի համաժողովի շրջանակներում կարգավորվող Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը (25 հունվարի, 2005թ.)

1. Խորհրդարանական Վեհաժողովն ափսոսում է, որ զինված բախումների սկզբից ավելի քան մեկ տասնամյակ անց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը դեռեւս կարգավորված չէ: Հարյուրհազարավոր մարդիկ դեռեւս տեղահանված են եւ չքավոր պայմաններում են ապրում: Ադրբեջանի տարածքի

զգալի մասը դեռ օկուպացված է հայկական ուժերի կողմից, եւ Լեռնային Ղարաբաղը դեռեւս վերահսկում են անջատողական ուժերը:

2. Վեհաժողովը մտահոգություն է հայտնում, որ զինված գործողությունները եւ դրանց նախորդած լայնատարած էթնիկ բախումները հանգեցրել են լայնածավալ էթնիկ վտարման մոնոէթնիկ շրջանների ձեւավորման, որոնք էթնիկ զտումների սարսափելի պատկեր են հիշեցնում: Վեհաժողովը վերահաստատում է՝ որեւէ պետությունից տարածաշրջանային հողակտորի անկախացումն ու անջատումը կարող է տեղի ունենալ միայն այդ տարածքի բնակիչների ժողովրդավարական աջակցությունը վայելող օրինական եւ խաղաղ գործընթացի հիման վրա, այլ ոչ թե էթնիկ վտարման եւ այլ պետության կողմից տվյալ տարածքի բռնազավթման պատճառ դարձած զինված հակամարտության արդյունքում: Վեհաժողովը մեկ անգամ եւս նշում է, որ անդամ երկրի կողմից այլ տարածքի օկուպացիան, այդ երկրի՝ որպես ԵԽ անդամի պարտավորությունների կոպիտ խախտում է եւ վերահաստատում է հակամարտության շրջանից տեղահանված անձանց իրենց տներ անվտանգ եւ արժանապատվորեն վերադառնալու իրավունքը:

3. Վեհաժողովը կրկին մատնանշում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822 (1993), 853 (1993), 874 (1993) եւ 884 (1993) բանաձեւերը եւ դրանցում մատնանշված կողմերին կոչ անում իրականացնել բանաձեւերը՝ մասնավորապես ձեռնպահ մնալով զինված ցանկացած բախումից եւ դուրս բերելով զինված ուժերն օկուպացված որեւէ տարածքից:
Վեհաժողովը միանում է նաեւ ՄԱԿ ԱԽ 853 բանաձեւի պահանջին, որն անդամ բոլոր երկրներից պահանջում է ձեռնպահ մնալ զենքի եւ զինամթերքի որեւէ մատակարարումից, ինչը կարող է հանգեցնել հակամարտության սրման կամ տարածքների օկուպացիայի շարունակման:

4. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին եւ Ադրբեջանին, ինչպես որ պարտավորվել են 2001-ի հունվարին ԵԽ անդամակցելիս, կիրառել հակամարտության հաղթահարման բացառապես խաղաղ մեթոդներ՝ ձեռնպահ մնալով ուժի սպառնալիքի կիրառումից հարեւանների նկատմամբ: Բացի այդ, Հայաստանը պարտավորվել էր օգտագործել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր զգալի ազդեցությունը՝ խթանելու հակամարտության հաղթահարումը: Վեհաժողովը երկու կառավարություններին կոչ է անում հավատարիմ մնալ այս պարտավորություններին եւ ձեռնպահ մնալ միմյանց նկատմամբ ուժի կիրառումից եւ զինված գործողությունների քարոզչությունից:

5. Վեհաժողովը կրկին ընդգծում է, որ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ) Նախարարների խորհուրդը 1992թ. մարտին Հելսինկիում համաձայնել է խորհրդաժողով հրավիրել Մինսկում՝

հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցային ֆորում ապահովելու նպատակով: Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը եւ Չեխիայի ու Սլովակիայի նախկին Դաշնային Հանրապետությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանի Դաշնությունը, Շվեդիան, Թուրքիան եւ ԱՄՆ-ն այդ ժամանակ համաձայնել էին մասնակցել խորհրդաժողովին: Վեհաժողովն այս երկրներին կոչ է անում ակտիվացնել ջանքերը հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ եւ Վեհաժողովում նրանց ազգային պատվիրակություններին հրավիրում է յուրաքանչյուր տարի Վեհաժողովին զեկուցել այս առումով իրենց կառավարությունների գործողությունների մասին: Այս նպատակով Վեհաժողովը դիմում է իր Բյուրոյին՝ ստեղծելու հատուկ հանձնաժողով, որը, ի թիվս այլոց, կներգրավի նշված ազգային պատվիրակությունների ղեկավարներին:

6. Վեհաժողովը հարգանքի տուրք է մատուցում Մինսկի խմբի համանախագահներին եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին անխոնջ ջանքերի համար, մասնավորապես 1994թ. մայիսին հրադադար ձեռք բերելու համար եւ այդ ժամանակից ի վեր զինադադարի պահպանման մոնիթորինգի համար: Վեհաժողովը կոչ է անում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին անհապաղ քայլեր ձեռնարկել շտապ բանակցություններ անցկացնելու համար, որպեսզի զինված հակամարտությունը դադարեցնելու քաղաքական համաձայնագիր կնքվի: Սույն համաձայնագրի կիրառումը կվերացնի բոլոր կողմերի մոտ առկա հակամարտության հիմնական հետեւանքները եւ թույլ կտա գումարել Մինսկի համաժողովը: Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին եւ Ադրբեջանին օգտվել ԵԱՀԿ Մինսկի գործընթացից եւ Մինսկի խմբի միջոցով միմյանց ներկայացնել միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան հակամարտության խաղաղ կարգավորման իրենց կառուցողական առաջարկները:

7. Վեհաժողովը վկայակոչում է, որ Հայաստանը եւ Ադրբեջանը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության ստորագրած կողմեր են եւ, համաձայն Կանոնադրության Հոդված 93, պարբերություն 1-ի, ipso facto Միջազգային դատարանի ստատուտի կողմեր: Հետեւաբար Վեհաժողովն առաջարկում է, որ եթե Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո բանակցությունները ձախողվեն, Հայաստանը եւ Ադրբեջանը պետք է քննարկեն Միջազգային դատարանին դիմելու հարցը՝ համաձայն Դատարանի Ստատուտի հոդված 36, կետ 1:

8. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին եւ Ադրբեջանին խթանել քաղաքական հաշտությունը միմյանց միջեւ՝ ընդլայնելով երկկողմ միջխորհրդարանական համագործակցությունը Վեհաժողովի շրջանակներում, ինչպես նաեւ այլ ֆորումներում, ինչպես օրինակ Կովկասյան քառյակի խորհրդարանների

Խոսնակների հանդիպումները: Վեհաժողովն առաջարկում է, որ երկու պատվիրակությունները պետք է հանդիպեն Վեհաժողովի յուրաքանչյուր նիստի ընթացքում՝ վերանայելու նման հաշտեցման ուղղությամբ առաջընթացը:

9. Վեհաժողովը կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը առանց նախապայմանների կապ հաստատել Լեռնային Ղարաբաղի երկու համայնքների քաղաքական ներկայացուցիչների հետ տարածաշրջանի ապագա կարգավիճակի առնչությամբ: Վեհաժողովը պատրաստ է Ստրասբուրգում հարմարություններ ապահովել նման շփումների համար՝ հիշեցնելով, որ ինքն այդպես էլ արել է նախկինում՝ հայերի մասնակցությամբ լսումներ անցկացնելով:

10. Հիշեցնելով Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում փախստականների եւ տեղահանված անձանց իրավիճակի մասին իր Հանձնարարական 1570 (2002)՝ Վեհաժողովը կոչ է անում բոլոր անդամ եւ դիտորդ պետություններին տրամադրել մարդասիրական օգնություն եւ աջակցություն այն հարյուրհազարավոր մարդանց, ովքեր տեղահանվել են զինված ընդհարումների հետեւանքով, այդ թվում՝ էթնիկ հայերը, որ արտաքսվել են Ադրբեջանից, եւ էթնիկ ադրբեջանցիները՝ Հայաստանից:

11. Վեհաժողովը դատապարտում է ատելության ցանկացած դրսեւորում Հայաստանի եւ Ադրբեջանի մամուլում: Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին եւ Ադրբեջանին խթանել հաշտությունը, ամրապնդել վստահությունը եւ փոխըմբռնումը իրենց ժողովուրդների միջեւ դպրոցների, համալսարանների եւ լրատվամիջոցների միջոցով: Առանց նմանօրինակ հաշտեցման ատելությունն ու անվստահությունը կխոչընդոտեն տարածաշրջանում կայունությանը եւ կարող են նոր բռնությունների հանգեցնել: Ցանկացած կայուն կարգավորում պետք է հաջորդի եւ բխի հաշտեցման նման գործընթացից:

12. Վեհաժողովը կոչ է անում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին կազմել գործողությունների ծրագիր՝աջակցելու Հայաստանին եւ Ադրբեջանին, որն ուղղված կլինի փոխադարձ հաշտեցման գործընթացներին, եւ հաշվի առնել սույն Բանաձեւը Հայաստանի եւ Ադրբեջանի վերաբերյալ գործողությունների մասին որոշումներ կայացնելիս:

13. Վեհաժողովը կոչ է անում Եվրոպայի խորհրդի Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսին աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի տեղական ընտրված ներկայացուցիչներին՝ ապահովելու փոխադարձ շփումներ եւ միջտարածաշրջանային համագործակցություն:

14. Վեհաժողովը որոշում է վերլուծել Եվրոպայի խորհրդի շրջանակներում առկա

հակամարտության կարգավորման մեխանիզմները, մասնավորապես Վեճերի խաղաղ կարգավորման մասին Եվրոպական կոնվենցիան, որպեսզի իր անդամ պետություններին ապահովի երկկողմ հակամարտությունների, ինչպես նաեւ այնպիսի ներքին վեճերի խաղաղ կարգավորման ավելի լավ մեխանիզմներով, որոնք ընդգրկում են տեղական կամ տարածաշրջանային տարածքային համայնքներ կամ իշխանություններ եւ կարող են վտանգել մարդու իրավունքները, կայունությունն ու խաղաղությունը:

15. Վեհաժողովը որոշում է պարբերաբար շարունակել այս հակամարտության զարգացման մոնիթորինգը մինչեւ դրա խաղաղ հանգուցալուծումը եւ որոշում է վերանայել այս հիմնահարցը իր 2006թ. առաջին նիստի ժամանակ:

Հանձնարարական 1690 (2005) [1]
ԵԱՀԿ Մինսկի համաժողովի շրջանակներում կարգավորվող Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը (25 հունվարի, 2005թ.)

1. Խորհրդարանական վեհաժողովն անդրադառնում է ԵԱՀԿ Մինսկի համաժողովի շրջանակներում կարգավորվող Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտության վերաբերյալ իր բանաձեւին 1416 (2005) եւ խորհուրդ է տալիս Նախարարների կոմիտեին՝

I. հորդորել շահագրգիռ կողմերին կատարել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձեւերի 822 (1993) , 853 (1993) , 874 (1993) եւ 884 (1993) պահանջները՝ մասնավորապես զերծ մնալով որեւէ զինված ընդհարումից եւ դուրս բերելով ռազմական ուժերը Ադրբեջանի բոլոր գրավյալ տարածքներից,

ii. վերահսկել այս հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերի եւ ԵԱՀԿ Նախարարների խորհրդի որոշումների կատարումը Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից եւ Վեհաժողովին զեկուցել այս մոնիթորինգի արդյունքների մասին,

iii. Վեհաժողովին զեկուցել հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված Միացյալ ազգերի անվտանգության խորհրդի բանաձեւերի համաձայն անդամ պետությունների ստանձնած ջանքերի մասին եւ այն մասին, թե արդյո՞ք անդամ պետությունները զերծ են մնում որեւէ զենքի եւ զինամթերքի մատակարարումից, ինչը կարող է հանգեցնել հակամարտության ուժեղացման կամ տարածքի շարունակվող բռնազավթման, որը խախտում է Միացյալ ազգերի անվտանգության խորհրդի բանաձեւը 853 (1993),

iv. վկայակոչելով Լեռնային Ղարաբաղում հակամարտության մասին իր Հանձնարարական 1251-ը (1994)՝ Հայաստանին եւ Ադրբեջանին, եթե նրանք նման ցանկություն հայտնեն, տրամադրել փորձագետներ, ովքեր կարող են օժանդակել Լեռնային Ղարաբաղի համար քաղաքական կարգավիճակի մշակման հարցում,

V. միջոցներ տրամադրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վստահությունն ամրապնդող առանձնահատուկ միջոցառումների գործողությունների ծրագրի համար,

VI. միջոցներ տրամադրել երկու երկրների ուսուցիչների եւ լրագրողների համար հատուկ դասընթացների անցկացման նպատակով, որոնք ուղղված կլինեն փոխըմբռնման, հանդուրժողության ու հաշտեցման խթանմանը,

VII. միջոցներ տրամադրել Եվրոպական հանձնաժողովի կողմից հատուկ գործողությունների համար՝ ընդդեմ երկու երկրներում Ռասիզմի եւ անհանդուրժողականության՝ մասնավորապես կապված կրթական հաստատությունների եւ հանրային լրատվամիջոցների հետ,

VIII. հրահանգել իր իրավասու ղեկավար հանձնաժողովին վերլուծել, թե որքանով է Վեճերի խաղաղ կարգավորման եվրոպական կոնվենցիան արտացոլում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջեւ ծագած հակամարտության կարգավորման արդի պահանջները, եւ թե ինչպես այն պետք է վերանայվի, որպեսզի հնարավորություն ապահովի եւ համապատասխան գործիք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջեւ ծագած վեճերի խաղաղ լուծման համար,

ix. հաշվի առնել բանաձեւը 1416 (2005) երկու երկրներին առնչվող գործողությունների մասին որոշումներ կայացնելիս,

x. ուղարկել բանաձեւը 1416 (2005) եւ սույն Հանձնարարականը անդամ պետությունների կառավարություններին՝ նպատակ ունենալով աջակցել նրանց ազգային, երկկողմանի եւ միջազգային մակարդակներում:

[1] Վեհաժողովի քննարկումը, 25 հունվարի, 2005 (2-րդ Նստաշրջան) (տե՛ս) , Քաղաքական հարցերով հանձնաժողովի հաշվետվությունը, զեկուցող՝ պրն Աթկինսոն): Տեքստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 25 հունվարի, 2005 (2-րդ Նիստ):

Վերը նշված փաստաթղթերում առաջին հերթին աչք է ծակում խնդրի ձեւակերպման արհեստականությունը՝ "Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտություն": Այսինքն՝ փորձ է արվում ԼՂՀ-ն ամբողջովին անտեսել որպես հակամարտող կողմ՝ խնդիրը հավասարեցնելով ադրբեջանական որեւէ շրջանի շուրջ երկկողմ (Հայաստան-Ադրբեջան) հակամարտության, ինչի համատեքստում եւ արդարացվում են "անջատողական վարչակարգ", "օկուպացված տարածքներ" ձեւակերպումները:

Վերը նշված բանաձեւում առաջին անգամ խոսվում է Մինսկի խմբին զուգահեռ ղարաբաղյան հակամարտությամբ զբաղվող այլ ձեւաչափի մշակման (ԼՂ հարցերով ԵԽԽՎ հատուկ հանձնաժողով) անհրաժեշտության մասին, ինչը եւ կյանքի կոչվեց հետագայում: Առաջին հայացքից նոր ենթահանձնաժողովը կրկնում եւ լրացնում է Մինսկի խմբի ձեւաչափը, քանի որ դրանում ներգրավված են նույն երկրները՝ խորհրդարանական պատվիրակություններով, սակայն կարծես թե անուշադրության է մատնվում հետեւյալ հանգամանքը. նախ Մինսկի խումբը ձեւավորվել է փաստացիորեն կամ տարերայնորեն, առանց որեւէ հիմնադիր փաստաթղթի, եւ ժամանակի ընթացքում ստացվել է այնպես, որ բանակցային բուն գործընթացին իրական մասնակցություն ունեն հիմնականում եռանախագահները: Մյուս կողմից խնդրի կարգավորման բանակցությունների արդյունավետությունը հազիվ թե կախված է այն հանգամանքից, թե բանակցային տվյալ ձեւաչափում մասնակիցներն ու միջնորդները հանդես են գալիս գործադրի թե օրենսդրի ներկայացուցիչներով:

Չմոռանանք նաեւ, որ վերը նշված երկու փաստաթղթերն ընդունվել են բրիտանացի խորհրդարանական Դեւիդ Աթկինսոնի կազմած զեկույցի հիման վրա: Իսկ Մեծ Բրիտանիան եւ Միացյալ Նահանգները 1990-ականների վերջից ակտիվորեն քարոզում եւ ֆինանսավորում էին Ռուսաստանից անկախ էներգակիրների շուկայի դիվերսիկացումը, որտեղ Ադրբեջանը ոչ երկրորդական նշանակություն ուներ՝ որպես ե՛ւ էներգակիրների աղբյուր, ե՛ւ դրանց տարանցման ուղի: Այս ծրագրի շրջանակներում 2005-ին (ԵԽԽՎ 1416 բանաձեւի ընդունումից երեք ամիս անց) գործարկվեց Բաքու-Ջեյհան-Թբիլիսի նավթատարը: Այս հանգամանքը թերեւս ԵԽԽՎ շրջանակներում տրամադրությունների փոփոխման միակ եւ կարեւորագույն պատճառը չէ, այնուամենայնիվ ակնհայտ է, որ այդ փոփոխությունները գնալով առավել սուբյեկտիվ են դառնում:

1416-Ը "ԶԱՐԳԱՆՈՒՄ Է"

Լեռնային Ղարաբաղին առնչվող ԵԽԽՎ փաստաթղթերի շարքում թիվ 1416 բանաձեւը դարձավ բեկումնային: Նշված փաստաթղթով եւ դրանից հետո ընդունված բանաձեւերում ակնհայտ են ղարաբաղյան հակամարտությունը՝ որպես զուտ Ադրբեջանի ներքին խնդիր ներկայացնելու փորձերը: Այս մասին է մասնավորապես վկայում 2007-ին Հայաստանի եւ Ադրբեջանի պարտավորությունների իրականացման վերաբերյալ ընդունված բանաձեւերի համեմատությունը:

Բանաձեւ 1532 (2007) (23 հունվար, 2007) Հայաստանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների կատարման մասին

8. Վեհաժողովը ցավում է, որ չնայած 2006թ. Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ կազմակերպված երեք հանդիպումներին եւ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ մինչ այժմ ոչ մի էական առաջընթաց չի գրանցվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Այն կրկնում է, որ այս հակամարտությունը հնարավորինս շուտ կարգավորելը երկու պետությունների շահերից է բխում՝ բացառելով ուժի կիրառումը՝ համաձայն Եվրոպային նրանց միանալու պահին ուժի մեջ մտած պարտավորությանը: Առանց վերջնական կարգավորման ամբողջ տարածաշրջանում կայունության եւ բարգավաճման հեռանկարները մնում են անորոշ: Վեհաժողովն ինքը պարտավորվում է օգնել, մասնավորապես բյուրոյի ժամանակավոր հանձնաժողովի միջոցով կատարել 1416 (2005) Բանաձեւը Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտության վերաբերյալ, որով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի համաժողովը, որպեսզի ստեղծվի դրական բանակցային միջավայր, եւ խթանվի երկխոսությունը խորհրդարանների մակարդակով եւ երկու շահագրգիռ պետությունների բնակչության միջեւ, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի բնակչության հետ՝ միաժամանակ ձեռնպահ մնալով բանակցային գործընթացին միջամտելուց:

Բանաձեւ 1545 (2007) (16 ապրիլ, 2007) Ադրբեջանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների կատարման մասին

9. Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը.

9.1. Վեհաժողովը անդրադառնում է իր բանաձեւին 1416 (2005), որը վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի համաժողովի շրջանակներում քննարկվող Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի վերաբերյալ հակամարտությանը, որտեղ նշվում է, որ Ադրբեջանի զգալի հատվածներում տարածքը դեռեւս

օկուպացված է հայկական ուժերի կողմից, եւ ափսոսանք է հայտնում, որ չնայած Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ բարձր մակարդակի երկխոսության շարունակելի լինելուն՝ այս հակամարտությունը, որը պատճառ է դարձել ադրբեջանական կողմում ավելի քան 4 000 անհայտ կորած եւ մոտ 760 000 տեղահանված անձանց, մնում է չլուծված:

9.2. Վեհաժողովը հիշեցնում է իր մտահոգությունը, որն արտահայտված է իր 1416 (2005) բանաձեւում առ այն, որ ռազմական գործողությունները եւ դրանց նախորդած լայնատարած էթնիկ թշնամությունը ե՛ւ հանգեցրին լայնածավալ էթնիկ արտաքսման, ե՛ւ ստեղծեցին մոնո-էթնիկ տարածքներ՝ հիշեցնելով էթնիկ զտումների սարսափելի հայեցակարգը: Ուստի Վեհաժողովը կոչ է անում կողմերին ուժեղացնել իրենց ջանքերը Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի երկու համայնքների միջեւ խաղաղությունը եւ ներդաշնակությունը վերականգնելու ուղղությամբ;

9.3. Եվս մեկ անգամ հաստատելով, որ այս հակամարտությունը հնարավորինս շուտ ավարտելը երկու կողմերի շահերից է բխում, բացառելով ուժի գործադրումը՝ համաձայն իրենց անդամակցության պարտավորությունների՝ Վեհաժողովը կոչ է անում նրանց, հակառակ ներքին քաղաքական օրակարգին, պահպանել 2006թ. վերջում կայացած բանակցությունների ժամանակ առաջացած տեմպը եւ զերծ մնալ ցանկացած չհիմնավորված ձգձգումներից, երկարաձգումներից կամ ձեռք բերված պայմանավորվածությունների դիտավորյալ ձախողումից:

9.4. Վեհաժողովը առաջարկում է Ադրբեջանի իշխանություններին նախապատրաստել բնակչությանն ընդունելու այն միջոցառումները, որոնց շուրջ ներկայումս բանակցություններ են ընթանում: Այս համատեքստում ողջունում եւ խրախուսում է կապը, որը վերջերս ստեղծվել է ադրբեջանական եւ հայկական քաղաքացիական հասարակության խմբերի միջեւ:

9.5. Վեհաժողովն ակնկալում է, որ Բյուրոյի՝ 1416 (2005) բանաձեւի կատարման հատուկ հանձնաժողովը շուտով կկարողանա այցելել երկու երկրներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան՝ օգնելու խթանել դրական մթնոլորտը՝ միաժամանակ ձեռնպահ մնալով բանակցային գործընթացին միջամտելուց:

10. Վեհաժողովը որոշում է շարունակել Ադրբեջանի կողմից ստանձնած պարտավորությունների եւ հանձնառությունների իր մոնիթորինգը: Այն առանձնապես կարեւորում է 2008 թվականի առաջիկա նախագահական ընտրությունները, որոնք երկրի պատմության մեջ առաջին անգամ պետք է լիովին համապատասխանեն ազատ եւ արդար ընտրությունների միջազգային չափանիշներին:

Առաջին հայացքից այս երկու փաստաթղթերում աչքի է ընկնում խնդրի

անհամաչափ ներկայացվածությունը: Եթե մինչեւ այժմ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը Հայաստանին եւ Ադրբեջանին առնչվող ԵԽԽՎ փաստաթղթերում ներկայացված էր հավասարապես, եւ ԼՂ ու նրա բնակիչների շահերը գոնե մասամբ արտահայտվում էին մեր երկրին առնչվող փաստաթղթերում, ապա դիտարկվող ժամանակահատվածում ԼՂ-ն՝ ե՛ւ որպես տարածքային միավոր, ե՛ւ որպես ինքնավարության ձգտող ժողովուրդ, կարծես անհետացել է փաստաթղթերից՝ ներկայացվելով որպես Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը քայքայող անջատողական եւ մարդասիրական իրավունքը ոտնահարող (այդ մասին է վկայում մասնավորապես "էթնիկ զտումների" մեղադրանքը) մի տարր:

ԼՂՀ-ին ուղղված մեղադրանքների շարքը շարունակում է զարգանալ նաեւ ԵԽԽՎ հետագա փաստաթղթերում՝ նույնիսկ տեղ գտնելով առաջին հայացքից հակամարտության հետ որեւէ առնչություն չունեցող բանաձեւերում:

Բանաձեւ1547 (2007) (18 ապրիլ, 2007) Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության վիճակը Եվրոպայում

11. Օրենքի գերակայությունը դեռեւս լիովին չի հարգված մի քանի եվրոպական երկրներում: Շատ դեպքերում դատական վարույթների անկախությունը եւ արդյունավետությունը կարիք ունեն ամրապնդման ու ուժեղացման: Ավելին՝ դեռեւս շարունակում են գոյություն ունենալ աշխարհագրական "սեւ անցքեր", որտեղ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների մեխանիզմները չեն կարող լիարժեքորեն իրագործվել: Սա վերաբերում է Բելառուսին՝ ոչ անդամ երկրի, եւ անդամ երկրների որոշ շրջաններին, որոնց իշխանությունները միջազգայնորեն ճանաչված չեն, եւ/կամ որոնք իրենց դե ֆակտո վերահսկողության տակ չեն, ինչպես օրինակ՝ Լեռնային Ղարաբաղը, Կոսովոն, "Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը", Հարավային Օսիան եւ Աբխազիան, ինչպես նաեւ Հյուսիսային Կիպրոսը:

Բանաձեւ 1548 (2007) (18 ապրիլ, 2007) Վեհաժողովի մոնիթորինգի ընթացակարգի առաջընթաց

3. Վեհաժողովը ցավում է, որ Եվրոպայի վերջին պատերազմները եւ հակամարտությունները շարունակում են խանգարել զարգացմանը դեպի լիարժեք, գործող ժողովրդավարական պետություններ, մի քանի հազար մարդ դեռեւս անհետ կորած են համարվում Կովկասում եւ Բալկաններում; Վրաստանը եւ Մոլդովան չեն կարողացել վերականգնել վերահսկողությունը իրենց անջատողական շրջաններում (Աբխազիա եւ Հարավային Օսիայի, Մերձդնեստր), իսկ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մնում է չլուծված: Այդ շրջանները որակվում են որպես "սեւ անցքեր" մարդու իրավունքների արդյունավետ

պաշտպանության առումով: Նմանատիպ Իրավիճակ է Չեչնիայում՝ Ռուսաստանի Դաշնությունում: Դեռեւս միջազգային կառավարում է անհրաժեշտ Բոսնիա եւ Հերցեգովինայում, Կոսովոյում:

2007-ին, երբ դեռ գործում էր Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԽ Բյուրոյի հատուկ հանձնաժողովը, հակամարտությանն առաջին անգամ ծավալուն անդրադարձ է կատարվում մարդասիրական իրավունքի տեսանկյունից. հնարավոր է՝ նպատակը հանձնաժողովի գործունեությունն այդպիսով առավել հիմնավորելն ու ԵԱՀԿ Մինսկի խմբից նրա գործառույթների տարբերությունն ընդգծելն էր:

Բանաձեւ 1553 (2007) (24 մայիս, 2007) Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների շուրջ ծավալված հակամարտությունների հետեւանքով առաջացած անհայտ կորած անձինք Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում

1. Անհայտ կորած անձանց հարցը Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում շարունակում է հսկայական տառապանք պատճառել անհայտ կորածների ընտանիքներին: Դա նաեւ մեծացնում է լարվածությունը տարածաշրջանում եւ խոչընդոտում է Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների շուրջ ծագած հակամարտությունների խաղաղ լուծում գտնելու ջանքերին:

2. Հակամարտության կամ ներքին բռնության իրավիճակի կողմերը հիմնական պատասխանատվությունն են կրում կանխելու համար անհետացումները, անհայտ կորածների ճակատագիրը պարզելու եւ նրանց ընտանիքների կարիքները բավարարելու հարցում:

3. Անհայտ կորածների հարցը մարդասիրական խնդիր է, որը հիմնվում է մարդու իրավունքների եւ միջազգային հումանիտար իրավունքի վրա: Այն չպետք է քննարկվի որպես քաղաքական հարց եւ, հետեւաբար, չպետք է կախված լինի տարածաշրջանում վեճերի քաղաքական կարգավորումից:

4. Անհայտ կորած անձանց հարցի լուծումը կարող է նպաստել թշնամանքի, անվստահության եւ անհանդուրժողականության մակարդակի նվազմանը, տարածաշրջանում վստահության կառուցմանը եւ կարող է նպաստել տարածաշրջանում առկա վեճերի քաղաքական կարգավորում գտնելու ջանքերին:

5. Ժամանակն էական է, երբ փորձ է արվում լուծել անհայտ կորածների հարցը: Զգձգումները երկարաձգում են անորոշությունը ու ընտանիքների տառապանքը եւ նվազեցնում են հավանականությունը անհայտ կորած անձանց գտնելու, բացահայտելու եւ վերադառնալու խնդիրը:

6. Տարածաշրջանում Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի անհայտ կորած անձանց ընդհանուր թիվը հասնում է 7 538 մարդու: Սա ներառում է, ըստ համապատասխան կողմերի, 4 499 ադրբեջանցիներ եւ 947 հայեր՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում հակամարտության հետեւանքով, եւ 1 763 վրացիների եւ 197 աբխազներ՝ Աբխազիայի տարածաշրջանի հակամարտության հետեւանքով: Ինչ վերաբերում է Հարավային Օսիայի տարածաշրջան շուրջ հակամարտությանը, հակամարտության արդյունքում Վրաստանի իշխանությունները մատնանշել են 10 վրացի եւ 122 հարավօսացի՝ որպես անհետացածներ:

7. Անհայտ կորած հարազատների ճակատագիրն իմանալը շահագրգիռ ընտանիքների հիմնարար իրավունք է եւ պետք է երաշխավորվի: Իմանալու իրավունքը ամրագրված է միջազգային մարդասիրական իրավունքում: Ավելին՝ պետական պրակտիկան՝ որպես միջազգային սովորութային իրավունքի նորմ, որը կիրառվում է միջազգային եւ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ, հիմնում է զինված հակամարտության յուրաքանչյուր կողմի պարտավորություն՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները հաշվարկելու համար այն անձանց, ովքեր համարվում են անհայտ կորած զինված հակամարտության արդյունքում, եւ նրանց ընտանիքի անդամներին ապահովել նրանց ճակատագրի մասին ցանկացած տեղեկատվությամբ: Իմանալու իրավունքը նաեւ խարսխված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (ԵՊՇ N 5), հատկապես 2, 3, 5, 8, 10 եւ 13 հոդվածներով պաշտպանված իրավունքների մեջ:

8. Խորհրդարանական վեհաժողովը, թեեւ ընդունում է Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի իշխանությունների ջանքերը, ափսոսում է, որ անհայտ կորածների հարցը շարունակում է հիմնականում մնալ չլուծված, չնայած ավելի քան տասներկու տարի է անցել տարածաշրջանում ռազմական գործողությունների ավարտից հետո:

9. Վեհաժողովը մտահոգված է անհայտ կորած անձանց գաղտնի կալանավորման մասին շարունակվող պնդումներով եւ կարծում է, որ բոլոր նման մեղադրանքները պետք է ուղղվեն Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (*CPT*) հարցերով Եվրոպական հանձնաժողովին, որպեսզի դրանք լիովին հետաքննվեն: Մշտական խոսակցությունները միայն մեծացնում են լարվածությունը տարածաշրջանում եւ ստիպում ընտանիքներին տառապել, մասնավորապես, քանի որ անհայտ կորածներին կենդանի գտնելու հնարավորությունը նման երկար ժամանակամիջոցից հետո չափազանց անհավանական է:

10. Վեհաժողովն ընդգծում է, որ անհայտ կորածների հարցը հակամարտության

մեկ կողմը չի կարող լուծել միակողմանիորեն, եւ որ սերտ համագործակցություն եւ համակարգում է անհրաժեշտ տարբեր շահագրգիռ կողմերի միջեւ: Այս առումով Վեհաժողովը համարում է, որ անհրաժեշտ է իր հանձնարարականներն ուղղել ոչ միայն Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին, այլ նաեւ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների "վարչակարգերին" շահագրգիռ երկրների իշխանությունների միջոցով: Այն վերահաստատում է Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը, իսկ այս բանաձեւում բերված առաջարկությունները չեն ենթադրում Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների որեւէ քաղաքական ճանաչում:

11. Հետեւաբար, Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների "վարչակարգերին"՝

11.1. լիակատար աջակցություն ցուցաբերել անհայտ կորած անձանց հարցի լուծման ժամանակ,

11.2. հարցին վերաբերվել որպես մարդասիրական եւ մարդու իրավունքների հարց եւ ոչ թե քաղաքական,

11.3. ձեռնպահ մնալ փոխադարձության սկզբունքի հիման վրա գործելուց՝անհայտ կորածների հարցով զբաղվելիս. տեղեկատվությամբ կիսվելը կամ քայլեր ձեռնարկելը, օրինակ, չպետք է պայմանավորված լինի մյուս կողմի տեղեկատվության տրամադրմամբ կամ քայլեր ձեռնարկելով,

11.4. ընդունել եւ իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան ներքին իրավական դաշտ, որը կզուգակցվի անհրաժեշտ կարգավորող միջոցառումներով՝ զբաղվելու համար անհայտ կորած անձանց հարցով, եւ կարտացոլի համապատասխան միջազգային պարտավորությունները,

11.5. համաձայնության գալ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) եւ մյուս հակամարտող կողմերի հետ անհայտ կորած անձանց ցուցակները համաձայնեցնելու վերաբերյալ,

11.6. ապահովել անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովների ստեղծում եւ գործունեություն եւ երաշխավորել նրանց առօրյա գործունեությունը այնպիսի համապատասխան կառույցների միջոցով, ինչպիսիք են աշխատանքային խմբերը կամ այլ համապատասխան մեխանիզմներ. այս հանձնաժողովները եւ նմանատիպ կառույցները պետք է ունենան օրենքով սահմանված հստակ մանդատ եւ անհրաժեշտ ռեսուրսներ եւ լիազորությունները, որպեսզի՝

11.6.1. ակտիվորեն հավաքել, կենտրոնացնել եւ մշակել բոլոր տեղեկությունները՝ կապված չհաշվառված անձանց եւ իրադարձությունների

եւ գերեզմանների վայրերի հետ,
11.6.2. կազմակերպել, իրականացնել եւ վերահսկել բոլոր անհրաժեշտ աշխատանքները բոլոր անհայտ կորած անձանց (բոլոր կողմերի կռվողների եւ քաղաքացիական անձանց) գտնվելու վայրը ճշտելու համար, այդ թվում մարդկային դիակների վերականգնման եւ նույնականացման հարցում,
11.6.3. տեղեկացնել ընտանիքներին անհայտ կորած անձանց հարցում առաջընթացի մասին եւ նրանց աջակցել ըստ իրենց պահանջի,
11.6.4. հաստատել կապեր եւ աշխատանքային հարաբերություններ իրենց գործընկեր հանձնաժողովների եւ աշխատանքային խմբերի հետ եւ միասին կազմել փոխըմբռնման համապատասխան հուշագրեր, որոնք կառաջնորդեն նրանց իրենց աշխատանքում,
11.6.5. պահպանել իրենց աշխատանքի մարդասիրական եւ ոչ դատական գործառույթը,
11.6.6. ներառել անհայտ կորած անձանց ընտանիքների ներկայացուցիչներ հանձնաժողովների եւ նմանատիպ կառույցների կազմի մեջ համապատասխան դեպքերում,
11.7. հիմնել բազմակողմ համակարգող մեխանիզմ յուրաքանչյուր համապատասխան հակամարտության համար (Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի), որը կզբաղվի անհայտ կորած անձանց ճակատագիրը պարզելու գործընթացների սահմանմամբ եւ իրականացմամբ՝ մասնավորապես մարդկային դիակների վերականգնման եւ նույնականացման գործընթացներով,
11.8. հավաքել, կառավարել եւ պահպանել տվյալները, ինչպիսիք են մինչ-դիահերձման տվյալները՝ նույնականացնելու համար անհայտ կորածներին. ուսուցանել եւ հոգեբանական աջակցություն ցուցաբերել նրանց, ովքեր հավաքում են նման տվյալներ, եւ հոգեբանական աջակցություն ընտանիքի անդամների համար, եթե նման տվյալներ պետք է տրվեն,
11.9. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ վերականգնելու եւ նույնականացնելու համար անհայտ կորած անձանց դիակները, այդ թվում՝
11.9.1. քարտեզագրել ու փոխանակել տեղեկատվություն հնարավոր գերեզմանոցների վայրերի մասին,
11.9.2. համաձայնության գալով ընթացակարգերի մասին՝ հետեւել, երբ բացվում են գերեզմանոցային վայրեր, եւ նույնականացվում են դիակներ,
11.9.3. ուսուցանել նրանց, ովքեր զբաղվում են դիակներով, որ ապահովվի չափանիշներին համապատասխան գործելը եւ տեխնիկական կողմի համապատասխանությունը,
11.10. ապահովել համապատասխան ներքին իրավական դաշտ հստակեցնելու համար իրավական կարգավիճակը, որպեսզի երաշխավորվի բոլոր անհայտ կորած անձանց շահերը, եւ ապահովվեն համապատասխան իրավական ու

վարչական միջոցները՝ բավարարելու համար ընտանիքի անդամների եւ խնամքի տակ եղած անձանց իրավական եւ նյութական կարիքները՝ ընդգրկելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են անհայտ կորած անձանց երեխաների խնամքը, ժառանգական իրավունքները, կրկին ամուսնանալու իրավունքները, կենսաթոշակային իրավունքները եւ պետական աջակցություն ստանալու իրավունքը,

11.11. տրամադրել նյութական, սոցիալական եւ հոգեբանական օգնություն անհայտ կորած անձանց ընտանիքներին,

11.12. քայլեր ձեռնարկել՝ պահպանելու համար անհայտ կորած անձանց հիշատակը, այդ թվում անհայտ կորած անձանց նվիրված հիշատակի գրքերին ցուցաբերվող աջակցության, հուշարձանների եւ թանգարանների եւ անհայտ կորածների հիշատակի օրերի միջոցով:

12. Վեհաժողովը նաեւ կոչ է անում Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների "վարչակարգերին"՝

12.1. աջակցել անհայտ կորածների ընտանիքներին օժանդակող եւ անհայտ կորած անձանց հարցի լուծման հետ կապված քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին,

12.2. հեշտացնել շփումները, այդ թվում՝ միջսահմանային, անհայտ կորած անձանց ընտանիքների միջեւ,

12.3. ամենաբարձր մակարդակով պետական դիրքորոշում ցուցաբերել անհայտ կորածների հարցը լուծելու համար եւ զերծ մնալ հայտարարություններից՝ կապված անհայտ կորած անձանց հետ, որոնք կարող են ակտիվացնել թշնամանքն ու ատելությունը հակամարտության կողմերի միջեւ,

12.4. ապահովել անհայտ կորած անձանց հարցի խորհրդարանական վերահսկողությունը, հատկապես սույն բանաձեւի քննարկման միջոցով:

13. Վեհաժողովն ընդունում է, որ անհայտ կորած անձանց հարցի լուծման առաջընթացը տարբեր է հակամարտությունից հակամարտություն, եւ, հետեւաբար, կատարում է մի շարք առաջնահերթ առաջարկություններ յուրաքանչյուր կողմին: Այդ առաջարկները չպետք է որեւէ կերպ դիտվեն որպես սահմանափակում բոլոր կողմերի համար ուժեղ եւ գործառնական հանձնաժողովներ ունենալու հարցում, ակտիվորեն տվյալներ հավաքելու, համատեղ համակարգման մեխանիզմներ ստեղծելու, անհրաժեշտ իրավական դաշտ ապահովելու, անհայտ կորած անձանց ընտանիքների կարիքները հոգալու եւ վերը նշված այլ միջոցների հարցում:

14. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանին, որպես առաջնահերթություն՝

14.1. ապահովել, որ հանձնաժողովը դառնա լիարժեք գործառնական, եւ որ աշխատանքային խումբ ստեղծվի, որը կզբաղվի առօրյա խնդիրներով,

14.2. ապահովել, որ աշխատանքային կապ ստեղծվի Ադրբեջանում գործող

հանձնաժողովի հետ,

14.3. ավարտել մինչ-դիահերձում տվյալների հավաքումը,

14.4. հավաքվել եւ փոխանակել հնարավոր գերեզմանոցների տեղերի մասին տեղեկատվությունը:

15. Վեհաժողովը կոչ է անում Ադրբեջանին, որպես առաջնահերթություն՝

15.1. վավերացնել Ժնեւի կոնվենցիայի երկու լրացուցիչ արձանագրությունները,

15.2. ապահովել, որ աշխատանքային կապ ստեղծվի Հայաստանում գործող հանձնաժողովի հետ, եւ որ կազմակերպվի *modus operandi* Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հանձնաժողովի հետ աշխատելու համար,

15.3. ավարտել մինչ-դիահերձում տվյալների հավաքելը,

15.4. հավաքվել եւ փոխանակել համապատասխան տեղեկատվություն հնարավոր գերեզմանոցների գտնվելու վայրերի վերաբերյալ:

16. Վեհաժողովը կոչ է անում Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի "վարչակազմին" որպես առաջնահերթություն՝

16.1. մշակել *modus operandi*՝ Ադրբեջանի հանձնաժողովի հետ աշխատելու համար,

16.2. ավարտել մինչ-դիահերձում տվյալների հավաքումը,

16.3. հավաքվել եւ փոխանակել հնարավոր գերեզմանոցների տեղերի մասին տեղեկատվությունը,

23. Վեհաժողովը նաեւ կոչ է անում բյուրոյի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հակամարտության վերաբերյալ Բանաձեւ 1416 (2005)-ի 5-րդ կետի կատարման ժամանակավոր հանձնաժողովին, որը քննարկվում է Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի համաժողովի կողմից, հաշվի առնել անհայտ կորածների հարցը իր աշխատանքում:

Նշված փաստաթղթում հատկապես ուշագրավ է 10-րդ կետը, ըստ որի՝ "բանաձեւում բերված առաջարկությունները (անհայտ կորած անձանց հայտնաբերելու, փոխանակելու նպատակով ԼՂ եւ Ադրբեջանի միջեւ) չեն ենթադրում Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների որեւէ քաղաքական ճանաչում":

Հանձնարարական 1335

Անդրկովկասում փախստականների եւ տեղահանված անձանց վերաբերյալ (24 հունիս, 2007)

1. Նախկին Հարավսլավիայից հետո Անդրկովկասը Եվրոպայի այն տարածաշրջանն է, որը ներկայումս առավելագույնն է տուժում փախստականների եւ

տեղահանված անձանց խնդիրներից, որոնցից շուրջ 900 000 առկա է Ադրբեջանում, 300 000 Հայաստանում եւ 300 000 Վրաստանում: Միեւնույն ժամանակ հարյուրավոր, հազարավոր մարդիկ տարածաշրջանից մեկնել են այլ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան:

VIII. Առաջարկել Հայաստանին եւ Ադրբեջանին՝

Ա. Ադրբեջանում տեղահանված անձանց վերադարձը դարձնել առաջնահերթություն իրենց բանակցությունների ժամանակ, որպեսզի հնարավորություն տրվի այդ մարդկանց անվտանգ վերադառնալ, նույնիսկ նախքան ընդհանուր կարգավորման հասնելը,

Բ. ճանաչել փախստականների եւ տեղահանված անձանց վերադառնալու իրավունքը դեպի իրենց ծննդավայրեր եւ վերականգնել նրանց սեփականությունը, նրանց կրած ցանկացած վնասի պատշաճ փոխհատուցմամբ, կամ, եթե կամավոր վերադարձը չի կարող իրականացվել, ճանաչել փախստականների եւ տեղահանված անձանց կորցրած կամ լքված սեփականության դիմաց փոխհատուցում ապահովելու անհրաժեշտությունը եւ կնքել համաձայնություն, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ անձանց հնարավորինս արագ փոխհատուցում ստանա,

Գ. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ պարզելու համար անհայտ կորած անձանց ճակատագրերը, եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին տալ անսահմանափակ մուտքի հնարավորություն Ժնեւի կոնվենցիաների կողմից պաշտպանություն ունեցող կամ ԿԽՄԿ ի լրացուցիչ-պայմանական մանդատ շրջանակներում ընդգրկվող անձանց նկատմամբ,

xii. վկայակոչելով Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության մասին իր Բանաձեւը 1047 (1994)՝ կոչ է անում անդրկովկասյան երկրների սահմանակից երկրներին չխանգարել իրենց տարածքով մարդասիրական օգնության տեղափոխմանը:

Այս բանաձեւի VIII մասի "ա" կետը կրկին շեշտում է, որ ԵԽԽՎ փաստաթղթերում ղարաբաղյան հակամարտության կարգավորումը դիտարկվում է միայն ուժի չկիրառման եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքների համատեքստում, մինչդեռ ԵԽԽՎ բանաձեւերում հստակ երեւում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ընկալումը: Ակտիվ ռազմական գործողությունների ավարտից տարիներ անց, կարգավորման բանակցային գործընթացին զուգահեռ, խնդրի ընկալման նման փոփոխությունները դժվար է միանշանակ ասել՝ ինչ պատճառներ ունեն, այնուամենայնիվ փաստ է, որ դրանք չեն

կարող լինել օբյեկտիվ, քանի որ ռազմական գործողություններին հաջորդած տարիների ընթացքում խնդրի էությունը հազիվ թե կարող էր փոխվել:

ԵԽԽՎ շրջանակում ընդունված հաջորդ բանաձեւերը եւս շարունակում են հավատարիմ մնալ նույն ոճին, ուստի չկրկնվելու համար ստորեւ դրանք ներկայացնում ենք առանց մեկնաբանությունների:

Բանաձեւ 1614 (2008) (24 հունիս, 2008) Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Ադրբեջանում

25. Ինչ վերաբերում է Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման պարտավորությանը, Վեհաժողովը՝

25.1. կարծում է, որ կայուն ժողովրդավարական զարգացումը չափազանց դժվար կլինի Ադրբեջանում, քանի դեռ երկրի տարածքային ամբողջականությունը չի վերականգնվել,

25.2. ի գիտություն է ընդունում 2008 թվականի մարտի 14 Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունածե Ադրբեջանի օկուպացված տարածքների իրավիճակի մասինե բանաձեւը, որն արտահայտում է լուրջ մտահոգություն, որ Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում եւ դրա շուրջն ընթացող զինված հակամարտությունը շարունակում է վտանգել միջազգային խաղաղությունը եւ անվտանգությունը, վերահաստատում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, աջակցում է նրա միջազգայնորեն ճանաչված սահմանների պահպանմանը, եւ պահանջում է անհապաղ դուրս հանել հայկական ուժերը գրավյալ տարածքներից,

25.3. ողջունում է 2008թ. մայիսի 6-ին Ստրասբուրգում կայացած Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների հանդիպումը Նախարարների կոմիտեի հանդիպման շրջանակներում, ինչը նրանք երկուսն էլ հետագայում որակեցին որպես կառուցողական բանակցություններ: Երկու նախարարները վերահաստատեցին իրենց երկրների հանձնառությունը՝ ձգտել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման: Վեհաժողովը լրջորեն կոչ է անում Ադրբեջանին եւ Հայաստանին, շարունակել փնտրել միջազգային իրավունքի չափանիշներին եւ սկզբունքներին համապատասխան հակամարտության խաղաղ լուծում,

25.4. ողջունում է մոնիթորինգի հանձնաժողովի նախաձեռնությունը 2007 թվականի նոյեմբերին Բեռլինում կազմակերպել լսումներ "սառեցված

հակամարտությունների", այդ թվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ. այս առումով՝ Վեհաժողովը վերահաստատում է այն դերը, որ ինքը կարող է խաղալ՝ օգնելու խթանել դրական բանակցային մթնոլորտը խորհրդարանների մակարդակով երկխոսության միջոցով:

26. Վեհաժողովը դիմում է իր Մոնիթորինգի հանձնաժողովին շարունակել հետեւել Ադրբեջանում զարգացումներին՝ հատկապես նպատակ հետապնդելով ապահովել, որ 2008թ. հոկտեմբերին կայանալիք հաջորդ նախագահական ընտրությունները լիարժեքորեն համապատասխանեն ազատ եւ արդար ընտրություններին առնչվող Եվրոպայի խորհրդի չափանիշներին:

Բանաձեւ 1619 (2008) (25 June 2008) Ժողովրդավարության դրությունը Եվրոպայում

Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Եվրոպայում եւ վեհաժողովի մոնիթորինգի ընթացակարգի առաջընթացը

10. Չլուծված հակամարտությունների շարունակվող առկայությունը մոնիթորինգի ենթակա անդամ երկրներում:

10.1. Վեհաժողովը համարում է, որ ժողովրդավարական զարգացումները Ադրբեջանում, Վրաստանում եւ Մոլդովայում չեն կարող ամրապնդվել, քանի դեռ դրանց տարածքային ամբողջականությունը չի վերականգնվել:

10.2. Վեհաժողովը ողջունում է մոնիթորինգի հանձնաժողովի նախաձեռնությունը՝ "սառեցված հակամարտությունների" վերաբերյալ լսումներ կազմակերպել Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Մերձդնեստրի հակամարտությունների առնչությամբ Բեռլինում 2007թ.: Այս առումով Վեհաժողովը վերահաստատում է այն դերը, որ ազգային խորհրդարանները կարող են ունենալ վստահության խթանման գործում՝ որպես հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտ նախապայման: Վեհաժողովը նաեւ ինքը կարող է օգնել խթանելու դրական բանակցային մթնոլորտ խորհրդարանների մակարդակով երկխոսության միջոցով: Հետեւաբար Վեհաժողովը խրախուսում է վերը նշված հակամարտությունների վերաբերյալ հետագա լսումների կազմակերպումը:

10.3. Միեւնույն ժամանակ, Վեհաժողովն ափսոսանքով է նշում, որ հաշվետու ժամանակաշրջանում (2007թ. ապրիլ-2008թ. հունիս) նշված հակամարտությունների առնչությամբ որեւէ էական դրական զարգացում չի գրանցվել, լարվածությունը վերջերս սրվել է Աբխազիայի եւ Հարավային Օսիայի պարագայում:

Բանաձեւ 1647 (2009) (28 January 2009) Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ պատերազմի հետեւանքների մասին բանաձեւի 1633 (2008) իրականացումը

17. Քննարկելով Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ պատերազմի հետեւանքները Եվրոպայում այլ այսպես կոչված "սառեցված հակամարտությունների" հետ միասին՝ Վեհաժողովը կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ակտիվացնել իրենց դիվանագիտական ջանքերը՝ գտնելու լուծումներ, որոնք թույլ կտան խուսափել բռնի դիմակայությունից: Միեւնույն ժամանակ Վեհաժողովը պետք է ակտիվացնի իր գործունեությունն այդ հարցերում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի եւ Մերձդնեստրի առնչությամբ:

18. Վեհաժողովը կրկնում է իր պատրաստակամությունը՝ դեր խաղալ որոշակի հակամարտությունների կանխարգելման ոլորտում եւ այդ համատեքստում ողջունում է իր քաղաքական հարցերով հանձնաժողովի շրջանակներում վաղ ահազանգման համակարգերի եւ Եվրոպայում հակամարտությունների կանխարգելման ժամանակավոր ենթահանձնաժողովի ստեղծումը:

Բանաձեւ 1716 (2010) (27 ապրիլի, 2010)

Կանանց ներգրավումը Եվրոպայում չլուծված հակամարտությունների կանխարգելման եւ լուծման մեջ

1. Խորհրդարանական վեհաժողովն ափսոսանք է հայտնում, որ Եվրոպայի այն տարածքներում, որտեղ առկա են չկարգավորված հակամարտություններ, ինչպես եւ աշխարհում հակամարտության եւ հետկոնֆլիկտային այլ գոտիներում, կանայք շատ հաճախ անտեսվում են ճգնաժամային կառավարման, խաղաղ բանակցային եւ վերակառուցման գործընթացներում:

2. Եվրոպայում դեռեւս կան բազմաթիվ ակտիվ կամ "սառեցված" հակամարտություններ: Անկախ նրանից, թե դա Ադրբեջանում (Լեռնային Ղարաբաղ), Կիպրոսում, Վրաստանում (Հարավային Աբխազիա եւ Օսիա), Մոլդովայում (Մերձդնեստր) թե Սերբիայում է (Կոսովո)՝ Վեհաժողովը մտադիր է պատրաստ մնալ երկխոսությանը, հաշտեցմանը եւ խաղաղության որոնմանը աջակցելուն: Անհրաժեշտ է գիտակցել, որ կանանց դեռեւս բացառիկ դեպքերում են ընդգրկում, եւ գենդերային հարցերը պետք է հաշվի առնվեն այդ քաղաքական գործընթացներում:

Հայաստանի կողմից պարտավորությունների եւ պարտականությունների կատարման մասին

Այս տարի ԵԽԽՎ նոր նախագահի ընտրությամբ (թուրք պատգամավոր Մեվլութ Չավուշօղլու) կրկին ակտուալ դարձավ ԵԽ Բյուրոյի՝ ԼՂ հարցով հատուկ հանձնաժողովի աշխատանքը վերսկսելու հարցը: Հիշեցնենք, որ հանձնաժողովը ստեղծվել էր ԵԽԽՎ 1416 բանաձեւի հիման վրա՝ նույն բանաձեւը կյանքի կոչելու նպատակով: Կասկած չկա, որ ե՛ւ բանաձեւը, ե՛ւ հանձնաժողովի գործունեությունն

ունեն իրավական համապատասխան հիմքեր, սակայն արդյո՞ք Ղարաբաղյան խնդրով զբաղվելու իրավունք ունի մի մարմին, որը հիմնված է ակնհայտ միակողմանի դիրքորոշում արտահայտող փաստաթղթի վրա եւ անտեսում է մի ողջ հանրություն՝ իր բոլոր մարդասիրական (եւ ոչ միայն) իրավունքներով…